

Բոլոր համոզումները կուգան դառն փորձերէ, յետոյ, բայց մենք անցնինք մեր պատմութեան ընթացքին՝ և գծենք որ, Համիտական կառավարութիւնը Շէյխերով կրօնական քաղաքականութիւն վարելէն անյաջող դուրս եկած, իր աւերիչ քաղաքականութիւնը առաջ մղելու համար այս անգամ մտածեց հիմնել Կողակային քիւրդ կազմակերպութիւններ, որոց վրայ և դրոշմաց իր անունը՝ կոչելով զանոնք «Համիտիէ»ներ:

Տեսնենք թէ ի՞նչ են Համիտիէները:

ՔԻՒՐԴ ՀԱՄԻՏԻԷ ԳՆԴԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ի՞նչ է Համիտիէն. — Աշիրաթապետներէ կազմուած քրդական նոր հեծկազօր, գունդ գունդ կազմուած՝ ու կնքուած Սուլթան Համիտի անունով:

Բոլոր քաղաքագէտ իրազեկ չըջաններու կարծիքը ու նոյն իսկ իրականութիւնը այն է որ, Համիտիէ-հեծկազնդերը կազմուեցան ըստ էութեանը՝ ներքին թշնամիներու, այսինքն Հայեթու դէմ կուռելու համար, և ըստ արտաքին երևոյթին՝ սահմանակից և կամ ուրիշ արտաքին թշնամու դէմ:

Սուլթան Համիտը հայերուն կը նկատէր պետութեան ներքին թշնամիները:

Աշիրաթները «Համիտիէ» դառնալով չը դադրեցան իրենց Աշիրաթական հին վարչական կազմերէն: Ստացան առանձնաչընորձներ և զանազան արտօնութիւններ այն աստիճանի՝ որ գրեթէ իրենց բոլոր անիշխանական գործունէութեանց նկատմամբ անպատասխանատու կը մնային, և պետութեան հանդէպ ալ հարկատուութենէ ազատ էին գրեթէ:

Համիտիէներու սխրագործութիւններու համար՝ բաւական է հայկական ջարդերու պատմութիւնը: Բայց մենք որոննք օտար հեղինակաւոր կարծիքներ, այս կազմութեան և իրենց արժէքի նկատմամբ: